է Բելուջիստան։ Իմ սատծներս միայն անձնական ենթադրութիւն է, որ տակաւին կարօտ է հմուտ բանասէրների ու յայտնի հնագէտ-պատմաբանների մանրազնին հետազօտութեան և լուսաբանութեան։ Սակայն և այնպէս, ի նկատի առնելով մահմեդականների այն ընդհանուր յատկութիւնը, որ մի որևէ երկիր տիրելուն պէս բռնի միջոցներով՝ կամենում են տիրապետող հանդիսանալ, ոչ միայն նրանք իրենց լեզուն, բարքերը, սովորութիւնները և նիստ ու կացը մտցնում են իրենց ստորադրեալ ազգերի մէջ, այլև պատմական տեղերի, լեռների ու գետերի անունները մինչև անգամ փոփոխում-աղաւաղում են և կամ կնքում են բոլորովին մահմեդական անուններով։ Օրինակի համար՝ Արաքս կամ Երասխ գետին— Արազ, Ախուրեան գետին՝ Արփայ չայ, Եփրատ գետին՝ Մուրատ չայ, Արագած լեռան՝ Ալագեազ, Սև-լեռան՝ Կարա-դաղ, Լամ Երզնկայ քաղաքին՝ Իրիզայ, Ակն՝ Էկին, Սեբաստիա՝ Թոխաթ և այլն և այլն։ Զալաբի անունով մի կրօնամոլ հրէշ միանում է տեղական պարսիկների և լեռնցի լեզգիների հետ,—մօտաւորապէս 1751 թ. և Ուտիայոց աշխարհի Հայ քրիստոնեաների գլխին չար պատիժ ու կատաբեալ պատուհաս է հանդիսանում։ Մինչև մեր օրերը ծերունիները զարհուրանքով պատմում են, որ այդ գազանաբարոյ Զալաբին հարիւրաւոր և բիւրաւոր անմեղ քրիստոնեաների լեզուներն է կտրել տուել, որ մայրենի լեզուով չխօսեն, ականջներն է կտրել տուել ու խլացրել, որ ժամերգութիւն և ս.